ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ՀԱՅԱԳԵՏԸ

(Ասատուր Մնացականյանի ծննդյան 70-ամյակի առթիվ)

Լրացավ անվանի հայագետ, Մաշտոցի անվան մատենադարանի մատենագիտության և մանրանկարչության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Ասատուր Շմավոնի Մնացականյանի ծննդյան 70-ամյակը։

Ա. Մնացականյանը ծնվել է 1912 թ. հուլիսի 11-ին, Աշտարակի շրջանի նախկին Ղզելթամուր (այժմ Ոսկեվազ) գյուղում, հողագործ-այգեգործի ընտանիքում։ Սովորել է նախ հայրենի գյուղի տարրական, Օշականի յոթնամյա դպրոցներում, ապա միջնակարգ կրթությունը շարունակել Վաղարշապատի (այժմ Էջմիածին) գյուղատնտեսական տեխնիկումում։ Տեխնիկումն ավարտելուց հետո Աս. Մնացականյանն ագրոտեխնիկի պաշտոնով որոշ ժամանակ աշխատել է Վաղարշապատի, Սարդարապատի (այժմ Հոկտեմբերյան), Ղարաքիլիսայի (այժմ Կիրովական) և Թալինի շրջաններում։ 1933 թ. ընդունվել է Թբիլիսիի գյուղատնտեսական ինստիտուտը և ավարտել 1939 թ.։ 1934—1935 թթ. զբաղվել է մանկավարժական աշխատանքով՝ Վրաստանի Նակլայի շրջանում։ Աս. Մնացականյանի գրական գործունեությունը սկսվում է բանաստեղծություններ գրելով։ 1930-ական թվականների սկզբներից նա բանաստեղծություններ է տպագրում մամուլում, հետագայում նաև առանձին գրքույկներով՝ Ասատուր Շեմս գրական մականվամբ (կնքված՝ Գ. Մահարու կողմից)։

1940 թ. Աս. Մնացականյանը Թբիլիսիից վերադառնում է Երևան, աշխատանքի անցնում Մատենադարանում և իր կյանքն ու հետագա գիտակցական ողջ գործունեությունն առմիշտ կապում այդ նշանավոր գիտական հաստատության հետ։ 1942 թ. մեկնում է բանակ, մասնակցում Հայրենական մեծ պատերազմին, ճաշակում պատերազմի բոլոր դառնությունները, 1945-ին զորացրվում, վերադառնում Երևան և շարունակում իր սիրած գործը Մատենադարանում։ Զուգընթաց բանասիրական ու պատմագիտական համապատասխան կրթություն, Աս. Մնացականյանը մասնագիտական այդ թեերին լրացնում է համառ աշխատասիրությամբ և հայագիտության նկատմամբ ունեցած իր անձնադիր նվիրումով։ Եվ այս զույգ հատկանիշների օրգանական համադրումն էլ հենց սկզբից դառնում է Աս. Մնացականյան գիտ-

նական դիմորոշ գիծը, որն այնուհետև արդյունավորվում է հայագիտական անհերքելի արժեքներով։

Աս. Մնացականյանը միջնադարագետ է բառի ընդարձակ և բազմակողմանի առումներով. նա ձեռագրագետ-մատենագետ է, աղբյուրագետ-տեքստաբան, հին գրականության, արվեստի, նյութական և հոգևոր մշակույթի պատմության պատմաբան, բանասիրական ու պատմազգագրական առանձին խնդիրների հետազոտող։ Նրա գրչին են պատկանում շուրջ 200 մեծ ու փոքր, տպագիր ու անտիպ աշխատություններ, որոնք բնույթով կարելի է բաժանել հետևյալ խմբերի մեջ. 1. մատենագիտական-ձեռագրագիտական աշխատություններ, 2. տեքստաբանական աշխատություններ և գրապատմական ուսումնասիրություններ, 3. պատմազգագրական-արվեստաբանական հետազոտություններ, 4. պատմաբանասիրական-աղբյուրագիտական ուսումնասիրություններ։ Միջնա-

դարյան ձեռագրերի մատենագիտությունն ու ձեռագրագիտությունն առհասարակ Աս. Մնացականյանի գիտական շահագրգռությունների բուն տարածքն են կազմում, որ ուղեկցել է գիտնականին Մատենադարանում աշխատելու առաջին իսկ օրերից մինչև այժմ։ 1941—1942 թթ. նա կազմում է «Հայ միջնադարյան բանաստեղծության մատենագիտությունը», «Միջնադարյան գեղարվեստական սրձակի մատենագիտությունը» (ըստ Մատենադարանի ձեռագրական տվյալների), 1959-ին՝ «Միջնադարյան հայ մանրանկարչության ուղեցույցը» (ձեռագրերի մայր ցուցակի համար)։ Նրա ղեկավարած բաժնում է կազմվում և իր ու ակադ. Լ. Խաչիկյանի կողմից խմբագրվում, հրատարակվում երկհատոր համառոտ «Ցուցակ ձեռագրացը» (1965, 1970 թթ.), որը Մատենադարանի ամբողջ ձեռագրական ժառանգության նկարագրության առաջին փորձն է և գալիքում հրատարակվելիք ընդարձակ մայր ձեռագրացուցակի յուրատեսակ նախատիպը։ Բայց Աս. Մնացականյանի գիտական մտահղացման գլուխգործոցը «Մայր ցուցակ ձեռագրաց» ընթացիկ բազմահատոր աշխատությունն է, որի գիտական կրքոտ նախանձախնդիրը, նախաձեռնող-նախագծողն ու գիտական ղեկավարը ինքն է։ «Մայր ցուցակն» ընդգրկելու է Մատենադարանի հայերեն ձեռագրական ողջ ժառանգության մանրամասն պատկերը, բոլոր նյութ-միավորների նկարագրությամբ, հիշատակարանների լրիվ մեջբերումներով, խաչաձև ցանկերով և ընդհանուր տեղեկություններով։ Շուրջ 25 տարի է, ինչ Աս. Մնացականյանը զբաղված է «Մայր ցուցակ ձեռագրացի» նախապատրաստման, ղեկավարման ու խմբագրման աշխատանքներով։ Արդեն կազմվել է ձեռագրացուցակի հինգ հատոր, որոնցից առաջինը գտնվում է տպագրության մեջ, իսկ մյուսները խմբագրվել կամ խմբագրվում են։ «Մայր ցուցակ ձեռագրացն» իր գիտական ընդհանուր արժեքով հայագիտության հիմնարար և ամենամնայուն երկերից մեկն է լինելու։

Աս. Մնացականյանը մեծ ներդրում ունի միջնադարյան բանաստեղծների ամբողջական երկերի, գրական ու բանահյուսական հուշարձանների բաղդատական բնագրերի կազմման, հրապարակման և հետազոտության ասպարեզում։ Այս բնույթի նրա տպագրած ու անտիպ գրքերի թիվը հասնում է մոտ մեկուկես տասնյակի։ Նրա կողմից միջնադարյան բանաստեղծներից ամբողջական հրատարակության և հետազոտության են արժանացել Նաղաշ Հովնաթանը (1951 թ.), Պաղդասար դպիրը (1958 թ., երկուսն էլ Շ. Նազարյանի աշխատակցությամբ), Գրիգոր Տղան (1972 թ.)։ Միջնադարյան ձեռագրերից, տպագիր աղբյուրներից Աս. Մնացականյանը քաղել, բաղդատել, ծանոթագրել ու հետազոտել է հայ միջնադարյան ժողովրդական ու անանուն հեղինակների ժողովրդականացած երգերը («Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր», 1956 թ.), միջնադարյան հեղինակների հանելուկները («Հայ միջնադարյան հանելուկներ», 1980 թ.), միջնադարյան ժողովրդական քնարերգության ամենագողտրիկ նմուշների՝ հայրենների ամբողջական ժառանգությունը (անտիպ), V—XVIII դդ. հայ բանաստեղծության ստվարածավալ հատընտիրը (տակավին անավարտ և անտիպ)։ Նա կազմել է և հրատարակել «Հայ գրականության քրեստոմատիա» (1970 թ., 8-րդ դասարանի համար), հայ գրականության ֆրանսերեն անթոլոգիայում զետեղել սկզբից մինչև XVIII դ. հայ բանահյուսության ու գրականության նմուշները, գրել «Հայ գրականությունը 9—18-րդ դարերում», պատմական ակնարկը («Հայ ժող. պատմություն», հ. III, IV), «Նախաբուվանական շրջանի հայ գրականությունը» մենագրությունը (անտիպ) և մանավանդ «Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը» աշխատությունը (1968, 1969 թթ.) հայերեն և ռուսերեն լեզուներով, ուր լուսաբանվում են հայ-աղվանական գրական և հատկապես պատմական առնչությունների մի շարք կնճռոտ խնդիրներ։

Աս. Մնացականյանի գիտական շահագրգռությունների հաջորդ ոլորտը հայ հին և միջնադարյան արվեստն է, մասնավորապես զարդարվեստը։ Երկար տարիներ գլխավորելով Մատենադարանի մատենագիտության և մանրանկարչության բաժինը, ուր կատարվել են հայ մանրանկարչության արժեքավոր հետազոտություններ ու հրապարակումներ, Աս. Մնացականյանն անձամբ խորամուխ է եղել մանրանկարչության և առհասարակ հայկական զարդարվեստի մոտիվների ծագման, դրանց հնագույն գաղափարաբանության, խմաստավորված ազգագրական, առասպելաբանական հասկացությունների և ընկալումների լուսաբանման մեջ և իր տարիների որոնումները մարմնավորել մի քանի ուշագրավ աշխատություններում։ Պատմաազգագրական առանձնակի արժեք ունի նրա «Հայկական զարդարվեստ» մեծածավալ հետազոտությունը (1955 թ.), ուր պատմական, ազգագրական, բանահյուսական, լեզվաբարբառային փաստերի համադրումներով նա լուսաբանում է հայկական զարդամոտիվների ծագման, կիրառության և գաղափարական բովանդակության նախահիմքերը։ Այս աշխա-

տությունը հետագայում (1963 թ.) Ա.Ս. Մնացականյանը պաշտպանեց որպես դոկտորական դիսերտացիա։ Նույն մեթոդով է նա հետազոտում նաև եղջերվի մոտիվները հայ արվեստում («Դիցաբանական եղջերուն») և հանդում ուշադրավ հետևություններին։ Առանձնակի ուշադրության է արժանի նրա «Աղթամարի որմնաքանդակների նոր մեկնաբանությունն» անտիպ աշխատությունը, ուր հին փաստերի ու տվյալների նորոգ քննություններով նա նորովի է մեկնաբանում հայ միջնադարյան ճարտարապետության այդ նշանավոր հուշարձանի բարձրաքանդակների ծագումնաբանական արմատները և կուլտուր-պատմական իմաստն ու արժեքն առհասարակ։

Ա.Ս. Մնացականյանը ոչ միայն հետազոտող գիտնական է, այլև գիտական կադրերի հոգատար ղեկավար և ուսուցիչ։ Նրա գիտական ղեկավարությամբ մի խումբ ասպիրանտներ և բաժնի գիտաշխատողներ դարձել են հայ միջնադարյան գրականության և պատմության մասնագիտությամբ գիտությունների թեկնածուներ։

Ա.Ս. Մնացականյանը միջնադարագետ է բնավ ոչ իներտ և օրվա գիտական հրատապ խնդիրներից կտրված լինելու առումով։ Նա միշտ միշամուխ է ու մանակից հայագիտության այսօրվա այրող ու հրատապ խնդիրներին, օժտված է կրքոտ բանավիճողի զարմանալի ունակությամբ, գիտության՝ իրեն շահագրգռող յուրաքանչյուր բնագավառում վիճելի ամեն մի տեսակետի անմիջական արձագանքող։ Նա մարտնչող գիտնական է, ակտիվ հայրենասեր ու քաղաքացի, հատկանիշներ, որոնք արդյունավորվել են բանասիրական-բանավիճային բնույթի բազմաթիվ մանր ու մեծ հետազոտություններով։ Ու թեպետ այդ բանավեճերում հանդիպում են որոշ վիճելի, անգամ անընդունելի տեսակետներ, սակայն դրանք բնավ չեն նսեմացնում Ա.Ս. Մնացականյանի գիտական այն մեծ դրական վաստակը, որը սովետական հայագիտության անուրանալի նվաճումներից է։

Միայն մնում է ցանկալ բազմավաստակ գիտնականին քաջառողջություն, եռանդ ու կորով գիտական իր մեծ ծրագրերն ամբողջացնելու և հայագիտությունը նոր արդյունքներով հարստացնելու իր նվիրական ճանապարհին։

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր